IDBank

2024 ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Բանկի մասին համառոտ	03
Ռազմավարական հաշվետվություն	11
Ռիսկերի կառավարում	26
Կորպորատիվ կառավարման զեկույց	31
Ֆինանսական հաշվետվություններ	43
Պատասխանատու անձանց հայտարարություն	48

Թարմացվել է՝ **2025**թ. նոյեմբերի **10**-ին

1

Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները

Խորհրդի նախագահի ուղերձը

Վարչության նախագահի ուղերձը

Բանկը՝ որպես հաշվետու թողարկող

IDBank-ը Հայաստանի նորարար զարգացող բանկերից մեկն է և արդեն 35-ամյա գործունեության փորձ ունի բանկային համակարգում:



IDBank-ը մեկ հայացքով

2024 թվականի արդյունքներով

- **Հայաստանի ամենաշահութաբեր բանկերի թոփ 5-յակում**
- **BNPL լուծումների առաջատար**
- **Տրանզակցիաների գծով առաջատար**

Ակտիվներ	**422 մլրդ**
Պարտավորություններ	**348 մլրդ**
Ավանդներ, Հաշիվներ	**223 մլրդ**
Կապիտալ	**74,5 մլրդ**
Զուտ շահույթ	**15,8 մլրդ**
ROE	**22.9 %**
CIR	**44.9%**

Հայաստանում անկանխիկ վճարումների ավելին քան 25%-ի ապահովում

- Առաջատար 3 բանկերի շարքում՝ թողարկված քարտերի թվով
- Քարտերով վճարումների ավելի քան **23%** տարեկան աճ
- Թվային հարթակում ակտիվ հաճախորդների **30%** աճ

Կորպորատիվ բանկային հաճախորդներ	**28 հազ.**
Մանրածախ բանկային հաճախորդներ	**655 հազ.**
Թվային հարթակում գրանցված ակտիվ հաճախորդներ	**85.0%**
Քարտեր	**465 հազ.**
“Գնիր հիմա, վճարիր հետո” 0%-ով POS տերմինալներ	**10,000+**
Աշխատակիցներ	**1,016**

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները

Բանկի առաքելությունը

Լինել առաջին ընտրության բանկ՝ ընդլայնելով մեր հաճախորդների հնարավորությունները և առաջարկելով նրանց աճող կարիքներին համապատասխան նորարար լուծումներ:

Բանկի տեսլականը

Դառնալ առաջատար թվային բանկը Հայաստանում՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

Բանկի արժեքները

> Նորարարություն - Նորարար լինելը մեր ԴՆԹ-ում է: Մենք միավորում ենք ֆինանսները և տեխնոլոգիաները՝ մեր հաճախորդների կյանքը հարստացնելով բարձրորակ, անվտանգ և արագ ծառայություններով:

> Թափանցիկություն - Բիզնեսում մենք թափանցիկ ենք ու ազնիվ և անսասան էթիկական չափանիշներով ենք առաջնորդվում մեր թիմի, հաճախորդների, գործընկերների և բաժնետերերի հետ բոլոր հարաբերություններում:

> Հաճախորդամետություն - Մեր հաճախորդները մեր գործունեության կենտրոնում են: Մենք առաջնահերթություն ենք տալիս նրանց կարիքներին՝ տրամադրելով անհատականացված փորձառություն և ապահովելով նրանց գոհունակությունը:

> Թիմ - Մեր հարստությունը մեր մարդիկ են: Մենք խրախուսում ենք մեր թիմին աշխատել ոգևորությամբ և լինել ստեղծարար՝ շարունակաբար զարգացնելով իրենց հմտությունները և իրացնելով ողջ պոտենցիալը:

> Սոցիալական պատասխանատվություն - Կայուն զարգացման մեր հանձնառությամբ օգնում ենք նվազեցնել բնապահպանական և սոցիալական ռիսկերը՝ հավաստիանալով, որ մեր գործունեությունը երկարատև դրական ազդեցություն կթողնի համայնքի վրա:

Խորհրդի նախագահի ուղերձը

Արթուր Ջավադյան
«Այդի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

Հարգելի՛ հաճախորդներ և գործընկերներ,

Ամփոփելով ինքնին առանձնահատուկ համարվող 2024 թվականը՝ կարող ենք պնդել, որ ռազմավարական մտածողությունը, տեխնոլոգիական առաջնորդությունը և նորարար արժեքները կարող են կայուն արդյունքներ ապահովել նույնիսկ գլոբալ անորոշությունների համատեքստում:

IDBank-ը պարզապես չի հարմարվում փոփոխություններին. մենք ձևավորում ենք նոր ստանդարտներ բանկային համակարգի համար: Մեր թիմը հավատարիմ է նորարարությանը, թափանցիկությանը և պատասխանատու կառավարմանը, և սա այն է, ինչը մեզ թույլ է տալիս երկարաժամկետ հարաբերություններ կառուցել ձեր, մեր ներդրողների և հաճախորդների հետ:

Այսօր մենք տեսնում ենք, թե ինչպես են մեր ջանքերը վերածվում վստահության, թվային էկոհամակարգի ընդլայնման և շուկայում բանկի դիրքի ամրապնդման՝ ունենալով որպես երաշխիք վստահությունը, որը մեր հիմնական ակտիվն է: Դրա շնորհիվ է, որ բանկը զարգանում է վստահությամբ և ապագայի հստակ հայացքով:

IDBank-ի Խորհուրդը շարունակում է հետևողականորեն իրականացնել կայուն աճի ռազմավարությունը՝ աջակցելով կառավարման թիմին և կայուն հիմք ստեղծելով հետագա ձեռքբերումների համար: Մենք վստահ ենք, որ ուժեղ թիմի, թվային լուծումների և հասարակության հանդեպ խորը պատասխանատվության համադրությունը ապագայի բանկի հիմքն է:

Շնորհակալություն ձեր գործընկերության, վստահության և համատեղ ճանապարհորդության համար: Մենք հպարտ ենք, որ IDBank-ը ոչ միայն ֆինանսական հաստատություն է, այլև հուսալի դաշնակից ձեր նպատակներին հասնելու ճանապարհին:

Հարգանքով՝
Արթուր Ջավադյան
«Այդի Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի նախագահ

Միեր Աբրահամյան

Վարչության նախագահ

Վարչության նախագահի ուղերձը

Հարգելի՛ գործընկերներ և հաճախորդներ,

Անցնող տարին IDBank-ի համար նշանակալի ձեռքբերումների, կայուն աճի և տեխնոլոգիական առաջընթացի շրջան էր: Մենք շարունակում ենք վստահորեն իրականացնել մեր ռազմավարությունը՝ խթանելով թվային փոխակերպումը և ստեղծելով երկարաժամկետ արժեքներ մեր հաճախորդների և գործընկերների համար:

Տարվա արդյունքներով մենք Հայաստանի ամենաշահութաբեր բանկերի հնգյակում ենք՝ հասնելով սեփական կապիտալի (ROE) 22.9% եկամտաբերության, ինչը գերազանցում է մեր ռազմավարական նպատակը՝ 20%: Մենք վստահորեն առաջ ենք գնում՝ ներդրումներ կատարելով նորարարության մեջ, ամրապնդելով կապիտալը և ընդլայնելով մեր հաճախորդների բազան:

Հատկապես կցանկանայի նշել BNPL (Buy Now - Pay Later) ուղղության զարգացումը: 2024 թվականին այս պրոդուկտի գործարքների ծավալը գերազանցել է 2,6 միլիոն գործարքը՝ հաստատելով ճկուն ֆինանսական լուծումների մեծ պահանջարկը: Մենք նաև ակտիվորեն մեծացրել ենք QR POS ենթակառուցվածքը, որոնց թիվը ամբողջ երկրում հասել է 22,700-ի:

Բացի թվային հաղթանակներից, մենք հպարտանում ենք մեր ֆիզիկական ներկայության ընդլայնմամբ. 2024-ին բացված «Հին Երևան» նոր մասնաճյուղը դարձել է ավանդույթի և նորարարության միաձուլման խորհրդանիշ, իսկ որոշ մարզերում արդեն ունենք ներկայացուցչական մասնաճյուղեր՝ հարմարավետության էլ ավելի բարձր մակարդակ ապահովելով հաճախորդների համար:

Անցած տարվա կարևոր իրադարձություններից մեկը idcoin-ի հաջող ներդրումն էր՝ հավատարմության նորարարական գործիքը և բանկի թվային էկոհամակարգի զարգացման նոր փուլը: Սա պարզապես թվային ակտիվ չէ, այլ հաճախորդի հետ փոխգործակցության նոր մոտեցում՝ նրանց նկատմամբ լոյալության նոր դրսևորում:

2024թ. հունիսին Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրեց IDBank-ի վարկանիշը միաժամանակ մի քանի ցուցանիշով, ինչը վստահության և կայուն զարգացման հերթական ապացույցն է, իսկ Հայաստանի սուվերեն վարկանիշը մնում է Ba3՝ կայուն հեռանկարով:

2025-ին նույնպես IDBank-ն ունի հավակնոտ ծրագրեր և ներդնելու է իր ողջ ներուժը սահմանած բարձր նշաձողը պահելու և նույնիսկ գերազանցելու համար:

Շնորհակալ ենք մեր հաճախորդներին ու գործընկերներին հավատարմության համար և վստահության համար՝ վստահեցնելով, որ մենք շարունակելու ենք առաջ գնալ՝ հանուն ձեր նպատակների և մեր ընդհանուր ապագայի: Շնորհակալ ենք նաև մեր թիմին նվիրված ու ազնիվ աշխատանքի համար. հենց նրանց շնորհիվ այսօր ունենք այն ցուցանիշներն ու հաջողությունները, որոնցով հպարտանում ենք:

Հարգանքով՝

Միեր Աբրահամյան

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Վարչության նախագահ

Մեր ձեռքբերումները

- ✓ **Ba2** - կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշ (CRRs)
- ✓ **Ba3** - տեղական արժույթով և արտարժույթով ներդրվող ավանդների երկարաժամկետ վարկանիշ

IDBank-ը առաջին հայկական բանկերից մեկն է, որն առաջարկում է **SWIFT global payment innovation (gpi)** ծառայություններ

IDBank- ը առաջին հայկական բանկն է, որը պաշտոնապես միացել է Առևտրի Միջազգային Պալատին (ԱՄՊ)

ԲՍԿ սկզբունքներին հանձնառություն՝ համապատասխանեցնելով IDBank- ը միջազգային կայունության չափանիշներին և շուկայական լավագույն փորձին:

Բանկը միացել է ֆինանսների և առևտրի բանկային միությանը **(BAFT)**՝ միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում

IDBank-ը պաշտոնապես միացել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բանկային ասոցիացիային **(BACEE)**

Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել են AMX- ում և ներառված են պարտատոմսերի հիմնական Abond և Bbond ցուցակներում

IDBank-ը՝ **VISA** քարտերի խոշոր թողարկողներից Հայաստանում

Բանկը՝ որպես հաշվետու թողարկող

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

2024 թվականի ընթացքում բանկը հաջողությամբ իրականացրել է 4 պարտատոմսերի թողարկում:

2024 թվական	մարտ	մայիս	հունիս	սեպտեմբեր
Թողարկման ընդհանուր ծավալը	**5 մլն** ԱՄՆ դոլար	**5 մլն** ԱՄՆ դոլար	**3 մլրդ** ՀՀ դրամ	**5 մլն** ԱՄՆ դոլար
Տարեկան եկամտաբերությունը	4.25%	4.75%	9.50%	4.75%
Մարման ժամկետ	27 ամիս	39 ամիս	27 ամիս	36 ամիս

✓ Արժեկտրոնի վճարման եռամսյակային պարբերականություն

Թողարկված պարտատոմսեր (մլրդ ՀՀ դրամ)



2024 թվականի վերջի դրությամբ թողարկման պարտատոմսերից առաջնային շուկայում տեղաբաշխվել է մոտ 12,3 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 2,5 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր:

2024 թվականի վերջի դրությամբ երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 9 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 33 մլն ԱՄՆ դոլար և 3,0 մլրդ ՀՀ դրամ:

Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝

- ✓Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժութային ռիսկ և այլն),
- ✓Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
- ✓Գնաճի ռիսկ

31/12/2024թ դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:

2

Ռազմավարական հաշվետվություն

ՀՀ տնտեսություն 10

Բանկի ֆինանսական արդյունքների ամփոփ վերլուծություն 11

Ռազմավարական արդյունքներ և նպատակներ 12

Կայուն բիզնես վարքագիծ 15

ՀՀ տնտեսությունը

Տնտեսական ակտիվության ցուցանիշ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՆԱ ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ հիմնական բաղադրիչների, %



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

2024 թվականի արդյունքներով Հայաստանում արձանագրվել է 8.0% տնտեսական ակտիվության աճ, ՀՆԱ-ն աճել է 5.9%-ով:

2025 թվականին աշխարհաքաղաքական անորոշ զարգացումներով պայմանավորված՝ կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի դանդաղում մինչև 5.0%:

ՀՀ տնտեսությունը

Միջին տարեկան փոխարժեքներ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Գնաճ (տարեկան կտրվածքով, ժամանակահատվածի վերջ, %



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Վերաֆինանսավորման դրույքաչափ, %



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 2024թ. ընթացքում եղել է բավական կայուն, իսկ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը միջինում արժևորվել է 8.5%-ով:

2024թ. դեկտեմբերին Հայաստանում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ սպառողական շուկայում գրանցվել է 1.5% գնաճ:

ԿԲ-ն արձագանքելով գնաճային միջավայրի փոփոխություններին՝ աստիճանաբար նվազեցրել է վերաֆինանսավորման դրույքաչափը՝ տարեվերջին սահմանելով 7.0%:

Ֆինանսական համակարգ

Բանկերի ակտիվների և վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Բանկային ավանդներ և վարկեր, մլրդ ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի և ավանդների միջին տոկոսադրույք



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

2024 թվականի արդյունքներով Վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 58%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5 տոկոսային կետով:

2024 թվականի ընթացքում 1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի և ավանդների տոկոսադրույքները համեմատաբար կայուն են մնացել:

Բանկի ֆինանսական արդյունքները՝ ամփոփ

2024 թվականին Բանկը գերակատարել է թիրախային ցուցանիշները՝ ապահովելով բարձր շահութաբերություն միջին շուկայական ցուցանիշների համեմատ:

Տարեվերջի դրությամբ Բանկի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 422 մլրդ ՀՀ դրամ՝ արձանագրելով 15% տարեկան աճ: Բանկը ավելացրել է ակտիվներում հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների կշիռը մինչև 48% (201 մլրդ ՀՀ դրամ): Վարկային պորտֆելի աճը պայմանավորված է ֆիզիկական անձանց (+29%) և իրավաբանական անձանց (+20%) վարկերի աճով:

2024 թվականի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր պարտավորությունները կազմել են 348 մլրդ դրամ, որի մոտ 70% կազմել են հաճախորդների ընթացիկ հաշիվները, ավանդները և Բանկի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը:

5-րդ
տեղը ROE-ով
22.9%

4-րդ
տեղը ROA-ով
4.0%

Բանկն արձանագրել է շուրջ 15,8 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ: Արդյունքում, Բանկը շուկայում զբաղեցրել է 5-րդ դիրքը կապիտալի շահութաբերությամբ (ROE)՝ 22.9% և 4-րդ դիրքը ակտիվների շահութաբերությամբ (ROA)՝ 4.0%:

Շահութաբերության բարձր մակարդակին նպաստող հիմնական գործոններից են զուտ տոկոսային եկամուտը (18% աճ), ինչպես նաև զուտ ոչ տոկոսային եկամուտները, մասնավորապես, Բանկը շուկայի առաջատարներից մեկն է առևտրային գործառնություններից ստացված զուտ եկամուտով՝ 9,8 մլրդ դրամ: Բանկը կշարունակի ձգտել բարձր մակարդակի շահութաբերության՝ ապահովելով իր գործառնական եկամտի կառուցվածքի լայն դիվերսիֆիկացում:

Կապիտալի շահութաբերության դինամիկա



Հաշվի առնելով, որ Բանկի կապիտալի համարժեքության, իրացվելիության մակարդակները գտնվում են բավականին բարձր մակարդակում և Բանկի զուտ մասհանումների մակարդակը ցածր է՝ Բանկը ունի լայն հնարավորություններ իր գործունեությունը ընդլայնելու և նոր նախագծեր իրականացնելու համար՝ չվնասելով Բանկի ֆինանսական կայունությանը՝ շարունակելով ստեղծել երկարաժամկետ կայուն արժեքներ իր բոլոր շահառուների համար:

Ակտիվների շահութաբերության դինամիկա



Ֆինանսական արդյունքներ

Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)



Շահույթ տարվա համար (մլրդ ՀՀ դրամ)



Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Բանկի պորտֆելները

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (ամորտիզացված արժեքով հաշվառվող), մլրդ ՀՀ դրամ



Անհատներին տրված վարկեր

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր

Մանրածախ վարկային պորտֆելի կառուցվածքը



Կորպորատիվ վարկային պորտֆելի կառուցվածքը



Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (մլրդ դրամ)



Մեր ռազմավարական արդյունքները

Ամփոփելով 2024 թվականը՝ վստահաբար կարող եմ նշել, որ մենք շարունակել ենք մեր ռազմավարական առաջընթացը և ամրապնդել մեր դիրքը որպես ոչ միայն ծառայություններ մատուցող, այլ նաև էկոհամակարգ ստեղծող: Ընդլայնվելով ավանդական բանկային գործունեության շրջանակներից՝ մենք զարգացրել ենք ինտեգրված և հաճախորդակենտրոն լուծումներ, որոնք կայուն արժեք են ստեղծում թե՛ անհատների, թե՛ բիզնեսների համար:

IDBank-ում մեր հիմնական նպատակը մնում է նույնը. յուրաքանչյուր հաճախորդի համար ապահովել բացառիկ փորձառություն՝ առաջարկելով արագ, հարմարավետ և ապահով հեռավար ծառայություններ: Մենք համալրել ենք մեր թվային պրոդուկտների և ծառայությունների շարքը՝ ձևավորելով ամբողջական էկոհամակարգ, որը ներառում է ամենօրյա բանկային, ֆինանսական և գործարքային լուծումներ, BNPL և իրական արժեք ավելացնող հավատարմության ծրագիր:

Շուրջ 130,000 հաճախորդներ արդեն պարգևատրվել են մեր idcoin հավատարմության համակարգի միջոցով՝ արտացոլելով մեր նվիրվածությունը հաճախորդների նկատմամբ:

2024 թվականին մենք դինամիկ աճ ենք գրանցել մեր հիմնական ռազմավարական ուղղություններով: Մեր առաջատար BNPL պրոդուկտը՝ Rocket Line-ը, հասանելի է ավելի քան 22,700 ֆիզիկական և առցանց վաճառքի կետերում, որից 10,200-ը առաջարկում է անտոկոս վճարում Rocket Line 0%-ով: Rocket Line-ի միջոցով կատարված գնումներն աճել են 84%-ով, իսկ թվային ապառիկի ծավալներն աճել՝ 90%-ով: Rocket Line 0% գործարքները կրկնապատկվել են՝ ընդգծելով սպառողների վստահության աճը:

Մեր առաջատար դիրքը թվային մանրածախ առևտրի, քարտերի թողարկման և վճարային լուծումների ոլորտում ավելի է ամրապնդվել: Թողարկված քարտերի ընդհանուր թիվը գերազանցել է 520 000-ը, իսկ քարտերով գործարքների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 28%-ով: Մեր քարտերի, առցանց հարթակների, QR-կոդի և POS/vPOS տերմինալների միջոցով կատարվող անկանխիկ վճարումները այժմ կազմում են հայկական շուկայում բոլոր անկանխիկ գործարքների 25%-ը:



2024 թվականին մենք ներկայացրել ենք IDBusiness բջջային հավելվածի նոր և արդիականացված տարբերակը՝ առաջարկելով ընդլայնված ֆունկցիոնալ և ավելի պարզ ինտերֆեյս բիզնես հաճախորդների համար, որոնց թիվն աճել է 33%-ով՝ գերազանցելով 28,000-ը:

2024թ. վերջի դրությամբ մեր ակտիվ հաճախորդների 85%-ը գրանցված է Բանկի թվային հարթակներում, իսկ նրանց ավելի քան 80%-ը ակտիվ է թվային ուղիներում ամսական կտրվածքով:

Idram&IDBank -ը հայկական առաջատար թվային էկոհամակարգն է թվային բանկինգի, վճարային և ֆինանսական ծառայությունների ոլորտում

685,000+ օգտատեր՝
Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության 55%-ը

Թվային **բանկինգի լիարժեք ֆունկցիոնալություն**

Հեռավար գրանցում և հաճախորդների նույնականացում
սմարթֆոնի միջոցով

15 բանկերի և 18 վարկային հաստատությունների համար վճարային ագրեգատոր,
համագործակցություն 1000+ ծառայություններ մատուցողների հետ, ներառյալ. երկրի բոլոր հիմնական առցանց ծառայությունները և հանրային ծառայությունները

Անհպում QR վճարումներ 22,700+ ֆիզիկական վաճառակետերում,
ներառյալ. սուպերմարկետներ, ռեստորաններ, սրճարաններ, խանութներ, հյուրանոցներ և այլն

Ապահով վճարում
Հայաստանի **ավելի քան 970 առցանց խանութներում web QR -ի և բջջային դրամապանակի միջոցով**

Ինտեգրված **ստացիր հիմա վճարիր հետո** լուծումը առցանց և QR վճարման տարբերակով գնումների և ծառայությունների համար՝ **22,700+ POS-ով,** ներառյալ **10,000+ POS, որը տրամադրում է մինչև 6 ամիս Rocket line 0% անտոկոս վճարման հնարավորություն**

465,000+ ակտիվ քարտեր

Առաջատարը Հայաստանում՝ VISA քարտերի թողարկման ոլորտում

P2P ակնթարթային դրամական փոխանցում հեռախոսահամարով և քարտի համարով
Հայաստանում և արտերկրում

Idram Junior – Հայաստանում երեխաների և դեռահասների համար նախատեսված առաջին ֆինանսական հավելվածը՝ անհպում QR վճարումների և փոխանցումների ֆունկցիոնալությամբ

Id+ հավատարմության թվային հարթակ վիրտուալ բոնուսային և նվեր քարտերով **առևտրով զբաղվողների և օգտատերերի համար, ինչպես նաև բոնուսային փոխանակում (աճուրդ)**

idcoin_նոր հավատարմության գործիք շուկայում

Հաճախորդների փորձը և թվային ներգրավվածությունը բարելավելու մեր շարունակական հանձնառության շրջանակներում, 2024թ. ապրիլին մենք հաջողությամբ մեկնարկեցինք idcoin հավատարմության ծրագիրը՝ մեր հաճախորդներին պարգևատրելու մեր էկոհամակարգի հետ շարունակական վստահության և ներգրավվածության համար:

Դա եզակի և նորարարական նախաձեռնություն է, որը հաճախորդներին թույլ է տալիս կուտակել հավատարմության միավորներ՝ օգտվելով Բանկի պրոդուկտներից ու ծառայություններից:

Որպես պրոդուկտի/ծառայության առանձնահատկություն

Idcoin-ը որպես մեր պրոդուկտներից ու ծառայություններից օգտվելու առավելություն

Արշավներ

Հաճախորդների ներգրավվածության և հավատարմության բարձրացում

Պարգևներ և գնահատում

Հաճախորդներին երախտագիտության հայտնում

Սոցիալական պատասխանատվության գործունեություն

ՍՊ մի շարք միջոցառումների և գործունեության աջակցություն

1 idcoin = 1 դրամ

Օգտագործման հեշտություն՝ Բանկի բոլոր ակտիվ հաճախորդները ավտոմատ ներգրավված են idcoin հավատարմության ծրագրում:

Վաստակելով idcoin-եր՝ հաճախորդները կարող են մարել դրանք idram&Idbank հավելվածի միջոցով՝ QR վճարում կատարելիս:

IDBank-ի նոր առաջատար մասնաճյուղ՝ «Հին Երևան»

Ձգտելով նորարարության՝ IDBank-ը բացեց իր «Հին Երևան» մասնաճյուղը 2024 թվականի օգոստոսին:

Մասնաճյուղը գտնվում է Երևանի պատմական սրտում՝ համադրելով ավանդույթներն ու առաջադեմ բանկային լուծումները. բացառիկ դիզայն, որը համալրված է լավագույն տեխնիկական լուծումներով:

Մասնաճյուղում ամեն ինչ կենտրոնացած է հաճախորդի հարմարավետության վրա, և այն բացառիկ է ինչպես մատուցվող ծառայությունների, այնպես էլ առաջարկվող հնարավորությունների շնորհիվ.

- Երկարացված աշխատանքային գրաֆիկ
- Ամբողջական բանկային ծառայություններ + հանգստի տարածք
- Հայտնի «Paul» սրճարանը, որն առաջարկում է սուրճ կամ համեղ նախաճաշ
- Առանձնացված հիփոթեքային կենտրոն՝ խորհրդատվություններ փորձագետներից, արագ հաստատումներ՝ ընդամենը 2-3 օրվա ընթացքում
- Կորպորատիվ կենտրոն՝ բոլոր տեսակի կանխիկ և անկանխիկ գործարքներ մեկ վայրում
- Պրեմիում բանկինգ՝ անհատականացված ծառայություններ, շքեղ սրահներ, առանձնացված ավտոկայանատեղի հաճախորդների համար



Բուզանդի փողոց 13, Երևան

Մեր հաճախորդները

Բանկի կողմից մատուցվող ծառայություններից հնարավորինս հարմարավետ օգտվելու նպատակով Բանկն այժմ առաջարկում է հետևյալ հիմնական ուղիները.

Բազմաֆունկցիոնալ ինտերնետ և մոբայլ բանկինգ

Նորարարական և հարմարավետ մասնաճյուղեր

Privilege/Private banking

24/7 ինքնասպասարկման գոտիներ



24/7 կոնտակտային կենտրոն

Կորպորատիվ հաճախորդներ

~ 28 հազ հաճախորդ

+33% տարեկան

Բանկը շարունակաբար զարգացնում է կորպորատիվ հաճախորդների սպասարկման մշակույթը՝ առաջարկելով համալիր ֆինանսական ծառայություններ և լուծումներ բոլոր կազմակերպությունների զարգացման և բարգավաճման համար: 2024թ. ընթացքում գրանցել ենք հետևյալ ձեռքբերումները.

- ✓ IDBusiness բջջայինի նոր թարմացված տարբերակ՝ բարելավված ֆունկցիոնալությամբ
- ✓ Ընդհանուր հաճախորդների քանակի և ակտիվ հաճախորդների բազայի 33% տարեկան աճ
- ✓ Կորպորատիվ հաճախորդների համար վարկերի հաստատման ավտոմատացված համակարգի ներդրում
- ✓ POS/VPOS տերմինալների քանակի տարեկան մոտ 38% աճ և շրջանառության ծավալների շուրջ 27% տարեկան աճ
- ✓ Թվային ապառիկի շուկայի մասնաբաժնի ընդլայնում: Rocket Line 0% թվային ապառիկի առևտրի/վաճառքի կետերի քանակը հասել է 10,000՝ ապահովելով տարեկան մոտ 33% աճ
- ✓ Բիզնես քարտերի վաճառքի ծավալի աճ. Visa Business Platinum պրեմիում դասի՝ տարեկան ավելի քան 39%, իսկ Visa Business դասի՝ ավելի քան 30% տարեկան

Մանրածախ հաճախորդներ

~ 655 հազ հաճախորդ

+17% տարեկան

2024 թվականի վերջի դրությամբ Բանկի մանրածախ հաճախորդների թիվը կազմել է 655,000: Բանկը մշտապես զարգացնում է իր գործող ծառայությունները, մշակում և ներդնում է նորը՝ հաճախորդներին առաջարկելով լավագույն լուծումները: Արդյունքում գրանցել ենք հետևյալ ձեռքբերումները.

- ✓ 2 նոր մասնաճյուղերի բացում՝ Հրազդան և Հին Երևան
- ✓ Մանրածախ ընդհանուր հաճախորդների 17%, իսկ ակտիվ հաճախորդների դեպքում՝ 23% տարեկան աճ
- ✓ Վճարային քարտերի քանակի տարեկան մոտ 14% աճ
- ✓ Քարտային վճարումների քանակի 28% աճ
- ✓ Մանրածախ վարկային պորտֆելի 29% տարեկան աճ
- ✓ Մոտ 130 հազ. հաճախորդ պարգևատրվել է idcoin-երով

ԲԱՆԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ԱՄՓՈՓ

ROE 20%↑

- QR վճարումների ազգային ենթակառուցվածք
- Ֆինանսական շուկայում հաճախորդների լավագույն փորձառություն
- Տեխնոլոգիական գերակայություն
- Վճարումների գծով առաջատար
- Լավագույն բանկ առևտրի/սպասարկման կետերի համար
- Ամենատարածված ֆինանսական էկոհամակարգ

Կայուն բիզնես վարքագիծ

IDBank-ի գործունեությունը բնութագրվում է շրջակա միջավայրի նկատմամբ կայուն բիզնես-վարքագծով. սոցիալական և բնապահպանական ռիսկերը դիտարկվում են որպես Բանկի ընդհանուր ռիսկային շրջանակի անբաժան մաս՝ ընդգրկելով ինչպես վարկային, այնպես էլ ներդրումային և գործառնական որոշումները:

Ստորև ներկայացված աղյուսակում բանկի վարկային պորտֆելն է՝ ըստ ԲՍԿ ռիսկերի մակարդակի: Այն ցույց է տալիս, որ Բանկի վարկային պորտֆելը կենտրոնացած է ավելի ցածր ռիսկայնությամբ ոլորտներում, և ԲՍԿ տեսանկյունից զգայուն ուղղությունները, ինչպիսիք են շինարարությունն ու գյուղատնտեսությունը, որպես վարկավորման հիմնական ուղղություններ Բանկը չի դիտարկում:

Միավոր	Ոլորտ	Մասնաբաժին	% ոլորտում
7-9	Շինարարություն	0.87%	5.79%
	Գյուղատնտեսություն: բուսաբուծություն (ոչ բազմամյա մշակաբույսեր)	0.15%	
	Գյուղատնտեսություն: անասնապահություն	0.00%	
5-6	Ֆինանսական և ապահովագրական գործունեություններ	5.45%	17.50%
	Սննդի արդյունաբերություն	0.08%	
	Կացության և հանրային սննդի կազմակերպման գործունեություններ	7.04%	
3-4	Մեծածախ և մանրածախ առևտուր	9.09%	18.41%
	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	7.48%	
	Տեղեկատվություն և կապ	1.08%	
1-2	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություններ	0.06%	0.08%
	Կրթություն	0.02%	
	Այլ ծառայություններ	3.64%	
	Չգնահատված/ մանրածախ/ 30.09.2024	54.59%	54.59%

Բանկը որպես սոցիալապես պատասխանատու կառույց կարևորում է ԲՍԿ-ի սոցիալական բաղադրիչը, ինչը արտացոլվում է Բանկի Մարդկային կապիտալի կառավարման բոլոր իրավական ակտերում: Բանկը հավասար և սոցիալապես արդարացի պայմաններ է ապահովում իր աշխատակիցների համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրանց իրավունքներին, առողջությանը և անվտանգությանը:

Բանկն իրականացնում է նաև համայնքների ներգրավման, նրանց խնդիրների վերհանման և դրանց լուծման մեխանիզմների մշակման և ներդրման գործընթացներ՝ հաշվի առնելով սոցիալական պատասխանատվության իր քաղաքականությունը:
Բանկի ընկալմամբ ՍՊ-ն կամավոր, սակայն ռազմավարական պարտավորություն է, որը Բանկի գործարար նպատակների նվաճմանը զուգահեռ միտված է նպաստել հասարակության ներկա և ապագա կարիքների բավարարմանը, կյանքի որակի բարձրացմանն ու բարեկեցիկ միջավայրի ձևավորմանը:

Նշված գործառույթներն իրականացնելիս Բանկը խստորեն հետևում է էթիկական և իրավական համապատասխանության պահանջներին և շահակիցների հետ հարաբերություններում հիմնվում է Բանկի կորպորատիվ արժեքների վրա:
Բանկի սոցիալական պատասխանատվության քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- Ֆինանսական գրագիտություն
- Ներառականություն
- Բնապահպանություն
- Աշխատակիցների բարեկեցություն և իրավունքների պաշտպանություն
- Թվային գրագիտություն
- Մարզերի զարգացում
- ՓՄՁ-ների զարգացում
- Սոցիալական աջակցություն

Սոցիալական պատասխանատվություն

Բանկի սոցիալական պատասխանատվության գլխավոր ծրագրերն են՝ Մի դրամի ուժը և Կողք Կողքի նախաձեռնությունը:

- «Մի դրամի ուժի» տարվա առաջին ծրագիրը՝ **հունվար** ամսվա կուտակված 3,665,972 դրամն ուղղվել է ՄՈՒԿ ունեցող երեխաների խնդիրներով զբաղվող «Հայ մայրեր» բարեգործական հիմնադրամին:

- **Փետրվարի** ողջ հասույթը՝ 3,780,052 դրամը նվիրաբերվել է «Սիթի Օֆ Սմայլ» բարեգործական հիմնադրամին՝ աջակցելու քաղցկեղի դեմ պայքարող երեխաներին:

- **Մարտի** շահառուն «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ն էր, իսկ կուտակված 4.017.648 դրամը բնապահպաններն ուղղեցին Հայաստանի անտառային ֆոնդի ավելացման ու կենսաբազմազանության պահպանման ծրագրերին:

- **Ապրիլի** շահառուն 4090 հիմնադրամն էր, որը կուտակված 3,913,063 դրամ գումարն ուղղեց քառօրյա և 44-օրյա պատերազմների մասնակից շուրջ հարյուր ուսանողների կրթավճարների տրամադրմանը:

- **Մայիս** ամսվա շահառուն էպիլեպսիա ունեցող երեխաների խնդիրներով զբաղվող «Կյանքի ճանապարհ» ՀԿ-ն էր: Հավաքված 4,101,050 դրամ գումարն ուղղվեց շահառու ընտանիքների հոգսերի թեթևացմանը:

- **Հունիսի** ընթացքում հավաքված 4,046,161 դրամ գումարը IDBank-ը և Idram-ը փոխանցեցին «Հզոր Միտք» ՀԿ-ին՝ «Հորիզոն» ամառային կրթական ճամբարի կազմակերպչական աշխատանքների համար:

- **Հուլիսին** հավաքված 4,165,643 դրամն ամբողջությամբ ուղղվեց «Impact Hub Yerevan»-ի՝ Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված Social Impact Award ծրագրին:

- «Մի դրամի ուժի» **օգոստոս** ամսվա շահառուն «Արեն Մեհրաբյան» հիմնադրամն էր: Իդրամի և IDBank-ի կողմից հիմնադրամին է փոխանցվել 4,135,630 ՀՀ դրամ՝ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի արոտավայրերի խնդիր ունեցող տնային տնտեսություններին աջակցելու նպատակով:

- **Սեպտեմբերի** շահառուն 2022-ին Արցախում ստեղծված «ԵՍ» կրթական հիմնադրամի «Մունք» տեխնոպարոցն էր, որը Հայաստանի տարբեր մարզերում երեխաներին ապահովում է տեխնոլոգիական կրթությամբ: Հավաքված 4,093,527 դրամն ուղղվեց համայնքների 100-ից ավել նոր դիմորդների ներգավման ծրագրին:

- **Հոկտեմբեր** ամսվա «մի դրամների» ողջ գումարը՝ 4,401,021 դրամ, փոխանցվեց «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի՝ մարզաբնակ երեխաներին ուղղված կրթական ծրագրերի իրականացմանը:

- **Նոյեմբերին** կուտակված 4,479,792 դրամն ուղղվեց Armenia Tree Project հիմնադրամի «Տնամերձ տնկարաններ» ծրագրին: Ծրագիրը, բնապահպանական լինելուց բացի, նաև սոցիալական էական բաղադրիչ ունի՝ բարելավում է գյուղաբնակ մեր հայրենակիցների կենսամակարդակը:

- **Դեկտեմբեր** ամսվա ընթացքում կուտակված 5,119,225 դրամ գումարը փոխանցվեց «Մարզերի երեխաները մարզերում» հիմնադրամի «ԴեմԱդեմ. Սերունդների երկխոսություն» ամենամյա մարզային ֆորումին:

2024 թվականի ընթացքում Բանկն իրականացրեց նաև արցախցի բազմազավակ ընտանիքներին ուղղված «Կողք կողքի» սոցիալական աջակցության ծրագիրը: Ինը ամիս տևած ծրագրի շահառուները թվով 42 արցախցի ընտանիքներից 150 անչափահաս երեխաներ էին, որոնցից յուրաքանչյուրի հաշվով Բանկն ամեն ամիս 40 000 դրամի չափով idcoin է փոխանցել:

3

Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ

Ռիսկի ախորժակ

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ

Հիմնական տնտեսական նորմատիվներ

Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1



Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)



Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից բարձր մակարդակում:

2024 թվականի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 19.3% (պահանջվող նվազագույն մեծությունը 11% է), իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 30.9% և 76.6% (պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 15% և 60% են):

Ռիսկի Ախորժակ

- Բանկի ռիսկերի կառավարման համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկն է ռիսկի ախորժակը:

- Ռիսկի ախորժակը ռիսկի առավելագույն մեծությունն է, որը Բանկը պատրաստ է կրել իր ռազմավարական նպատակներին հասնելու համար:

- Բանկի Ռիսկի ախորժակի ցուցանիշները հաշվի են առնվում Բանկի ռազմավարական ուղղությունների որոշման, նպատակների սահմանման, Կապիտալի համարժեքության ներքին գնահատման գործընթացի իրականացման, սթրես թեստավորման, նորմատիվային կապիտալի Բավարար մակարդակի և շահութաբերության ցանկալի մակարդակի ապահովման, ինչպես նաև այլ կառավարչական որոշումների կայացման ժամանակ:

- Բանկն իր ռիսկի ախորժակը հաշվարկում է այնպես որ հնարավոր կորուստները կարող է ծածկել սեփական կապիտալով՝ պահպանելով հիմնական տնտեսական նորմատիվները:

- Բանկը շարունակաբար զարգացնում է ռիսկի ախորժակի համակարգը՝ ներառելով նոր ռիսկեր և թարմացնելով մեթոդաբանությունը՝ համապատասխանեցնելով փոփոխվող տնտեսական միջավայրին, կարգավորող պահանջներին ու Բանկի ռազմավարական առաջնահերթություններին:

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Վարկային ռիսկի կառավարում

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է ոչ միայն վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ, այլև վարկառուների վարքագծի և վարկունակության գնահատման համար սքորինգային մոդելների մշակմամբ, վավերացմամբ և շարունակական կատարելագործմամբ՝ նպատակ ունենալ ներդնել նաև մեքենայական ուսուցման (ML) և արհեստական բանականության (AI) վրա հիմնված մոդելներ: Այս մոդելները հնարավորություն են տալիս ավտոմատացված և տվյալահեն գնահատականների միջոցով բարձրացնել վարկային որոշումների ճշգրտությունը և արագությունը՝ միաժամանակ նվազեցնելով մարդկային գործոնի ազդեցությունը և գործառնական ռիսկերը:

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- ✓ վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- ✓ գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցունակության աստիճանը և մրցակցությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ճեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով՝ նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկի կառավարման նպատակով Բանկը իրականացնում է արտարժութային բաց դիրքերի կառավարում՝ հետևելով սահմանված արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյթինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Ռազմավարական ռիսկի կառավարում

Բանկը նպատակաուղղված է ռազմավարական ռիսկերի վաղ հայտնաբերմանը և կանխարգելմանը՝ ապահովելու համար երկարաժամկետ կայուն զարգացումը: Այս նպատակով ներդրվել է Ռիսկի ախորժակի մոնիթորինգի համակարգ, որը թույլ է տալիս պարբերաբար գնահատել ռազմավարությամբ սահմանված ռիսկի ախորժակի և փաստացի ցուցանիշների համապատասխանությունը:
Ռիսկի ախորժակից շեղումների հայտնաբերման դեպքում Բանկը ձեռնարկում է նպատակային կառավարման և մեղմման միջոցառումներ, ներառյալ՝

- ռազմավարական առաջնահերթությունների վերանայում,
- ռիսկերի նվազեցման ուղղված ծրագրերի իրականացում,
- վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզմների ուժեղացում:

Այս մոտեցումը ապահովում է, որ Բանկի ռազմավարական ուղղությունները համահունչ լինեն իր ռիսկի հանդուրժողականության սահմաններին և նպաստում է կայուն մրցակցային դիրքի պահպանմանը շուկայում:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հետևում է ինչպես իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվներին (ընդհանուր, ընթացիկ, LCR, NSFR իրացվելիության նորմատիվներ), այնպես էլ վերջիններիս ներքին՝ ավելի խիստ սահմանաչափերին:

Բացի նշվածից, իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է նաև Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդելի և սթրես-թեստավորման միջոցով:

Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:

31/12/2024թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկեր (ՓԼ/ԱՖ ռիսկեր)

Համակարգում ֆինանսական հանցագործությունները կանխելու և միջազգային պատժամիջոցների պահպանումն ապահովելու համար Բանկը միջոցներ է ձեռնարկել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համար, ներառյալ հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը՝ կասկածելի գործարքները/գործարար հարաբերությունները բացահայտելու համար:

Բանկը ներդրել է ավտոմատացված ծրագրային լուծումներ (ինչպիսիք են Siron վերլուծական լուծումները, CRM և այլն)՝ ապօրինի գործողությունները իրական ժամանակում և պարբերաբար բիզնես հարաբերությունների ընթացքում արդյունավետորեն հայտնաբերելու և կանխելու, ինչպես նաև Բանկի գործունեությունը ՓԼ/ԱՖ պատժամիջոցների կանոնակարգերին համապատասխան պահելու նպատակով:

Գործառնական ռիսկի կառավարում

Բանկը գործում է «կանխարգելումից մինչև արագ արձագանք» սկզբունքով՝ ապահովելու համար գործառնական ռիսկերի արդյունավետ կառավարումը: Այս նպատակով իրականացվում է ռիսկերի մշտադիտարկում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի համալրում և խաբեության ռիսկի հայտնաբերում:
Բանկը նախատեսում է ներդնել արհեստական բանականության (AI) և մեքենայական ուսուցման (ML) վրա հիմնված գործիքներ՝ գործառնական ռիսկերի ավտոմատացված հայտնաբերման, վերլուծության և դասակարգման համար: Այս տեխնոլոգիաները հնարավորություն կտան

- իրական ժամանակում բացահայտել ռիսկային պատահարներ և կասկածելի գործարքներ,
- կիրառել կանխատեսողական վերլուծություն՝ կանխելու բարձր ռիսկայնությամբ իրադարձությունները,
- նվազեցնել մարդկային սխալի հավանականությունը և բարձրացնել ռիսկերի կառավարման ճշգրտությունը:

Բանկը շարունակական ներդրումներ է իրականացնում տեղեկատվական անվտանգության համակարգերի զարգացման և արդիականացման ուղղությամբ՝ ապահովելով միջազգային լավագույն փորձի համապատասխանություն, ինչպես նաև ուժեղացնելով առցանց զեղծարարության կանխարգելման և հակազդման միջոցառումները:

4

Կորպորատիվ կառավարման զեկույց

Կառավարման հիմունքները և տարեկան հայտարարագիրը 34

Նշանակալից մասնակիցները

Բանկի Խորհուրդը և Խորհրդի անդամները 35

Բանկի Խորհրդին կից կոմիտեի հայտարարությունը 35

Վարչակազմակերպական կառուցվածքը 36

Մեր Վարչությունը և անձնակազմը 36

Կորպորատիվ կառավարում

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն կորպորատիվ կառավարումը դիտարկում է իբրև թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետ կառավարման չափանիշների ամբողջություն, որով կարգավորվում են Բանկի բաժնետիրոջ, Բանկի Խորհրդի, Գործադիր մարմնի (կոլեգիալ և միանձնյա) և Բանկի հաճախորդների, կոնտրագենտների հետ փոխհարաբերությունները:

Բանկը կատարելագործում է իր կորպորատիվ կառավարման համակարգը՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները՝ ապահովելու բոլոր մասնակիցների և շահակիցների համար հավասար իրավունքներ և հնարավորություններ, ինչպես նաև արդյունավետ կառավարելու Բանկի բաժնետիրոջ, Խորհրդի, գործադիր մարմնի (կոլեգիալ և միանձնյա) միջև հարաբերությունները:

Բանկի կորպորատիվ կառավարման հիմքում ընկած են.

- ՀՀ օրենքները, մասնավորապես՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքները,
- Կենտրոնական բանկի կարգավորումները՝ ներառյալ լիցենզավորման, ներքին վերահսկողության, աուդիտի, ռիսկերի կառավարման պահանջները,
- Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, որի նկատմամբ Բանկը կիրառում է համապատասխանության գնահատում (այդ թվում՝ պարբերական վերանայում և վերլուծություն),
- Բանկի կանոնադրությունը և ներքին իրավական ակտերը, ներառյալ՝ Բանկի Խորհրդի գործունեության կարգը, Բանկի Խորհրդին կից կոմիտեների գործունեության կարգերը, Բանկի սերնդափոխության և վարձատրության քաղաքականությունները:

Բանկում կորպորատիվ կառավարումն իրականացվում է հետևյալ մարմինների միջոցով՝

- Միակ բաժնետեր, որն իրականացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովին օրենքով վերապահված լիազորությունները
- Խորհուրդ
- Գործադիր մարմին՝ Վարչության նախագահ (միանձնյա) և Վարչություն (կոլեգիալ)

Բանկի կառավարման համակարգի հիմքում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքները: Բանկը նաև միացել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ Կորպորատիվ կառավարման կանոնագրքին և արձանագրել է դրանով նախատեսված կառավարման սկզբունքներին փաստացի և բովանդակային համապատասխանություն (աստիճանական ներդրման տրամաբանությամբ՝ առնվազն երկրորդ փուլի պահանջներին):

Միևնույն ժամանակ Բանկը հանձնառու է շարունակաբար կատարելագործել ներդրված կորպորատիվ կառավարման համակարգը՝ այն խորապես համապատասխանեցնելով ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի դրույթներին, ինչպես նաև կորպորատիվ կառավարման միջազգային չափանիշներին:

Բանկի կորպորատիվ կառավարման 2024թ. հայտարարագրին կարելի է ծանոթանալ՝ անցնելով հղումով:

Հայտարարագիր

Բանկի Բաժնետերը

«Այդի Բանկ» ՓԲԸ-ի 100% բաժնետերն է «Այդի Գրուփ» ՓԲԸ-ն:

«Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերից ծագող իրավունքներն ամրագրված են Բանկի կանոնադրությամբ:» Բանկի կանոնադրությանը կարելի է ծանոթանալ այստեղ:

Բանկի ուղղակի նշանակալից մասնակիցներ

«Այդի Գրուփ» փակ բաժնետիրական ընկերությունը տիրապետում է Բանկի կողմից թողարկված 679437 հատ սովորական բաժնետոմսերին, որոնք կազմում են Բանկի կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) 100%-ը:
Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերից ծագող իրավունքներն ամրագրված են Բանկի կանոնադրությամբ:

Բանկի անուղղակի նշանակալից մասնակիցներ

Բանկի անուղղակի նշանակալից մասնակից է համարվում Լալա Բախշեցյանը, ով տիրապետում է Բանկի միակ բաժնետեր «Այդի Գրուփ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում համապատասխանաբար 72% և 7% մասնակցությամբ բաժնետերերի՝ DRIVELIO HOLDINGS LTD-ի և ՄՌՎ ՍՊԸ-ի 100% բաժնեմասերին:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի և 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի Խորհրդի և Վարչության անդամների վարձատրության ընդհանուր չափին, նրանց հետ Բանկի կնքած գործարքների մնացորդներին և միջին արդյունավետ տոկոսադրույքներին, ինչպես նաև Խորհրդի և Վարչության անդամների հետ Բանկի կնքած գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարների չափերին կարելի է ծանոթանալ՝
2024թ. տարեկան ֆինանսական հաշվետվության «ծանոթագրություն 33»-ում:

Բանկի 100% բաժնետերը
«Այդի Գրուփ» ՓԲԸ-ն է

Բանկի Խորհուրդը

2024 թվականի վերջի դրությամբ «Այդի Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի կազմում ընդգրկված էին Խորհրդի նախագահն ու 4 անկախ անդամ:

«Այդի Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամները նշանակվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի (տվյալ դեպքում՝ Բանկի միակ բաժնետիրոջ) կողմից: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի (տվյալ դեպքում՝ Բանկի միակ բաժնետիրոջ) կողմից, սակայն այդ ժամկետը չի կարող պակաս լինել 1 տարուց: Խորհրդի անդամներն ունեն վերընտրվելու իրավունք:

Խորհրդի կազմի բարձր որակավորումն ու փորձառությունն առանցքային նշանակություն ունեն «Այդի Բանկ» ՓԲԸ-ի համար՝ որպես կայուն և պատասխանատու կառավարման հիմք: Խորհրդի յուրաքանչյուր անդամ իր մասնագիտական գիտելիքներով, ոլորտային փորձառությամբ և ռազմավարական տեսլականով նպաստում է բանկի զարգացման երկարաժամկետ նպատակների իրականացմանը: Նրանց ներգրավվածությունն ապահովում է արդյունավետ վերահսկողություն, հավասարակշռված որոշումների կայացում և միջազգային լավագույն փորձի ներդրում բանկային կառավարման գործընթացներում:

Նիստերը

2024թ. Խորհուրդն անցկացրել է 9 նիստ, որից 1-ը հեռավար:

Խորհրդի, ինչպես նաև Խորհրդին կից կոմիտեի նիստերը կազմակերպվում են Բանկային օրենքի համաձայն՝ առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Ամբողջ տարվա համար կազմվում է նիստերի ժամանակացույց, իսկ արտահերթ նիստերը հրավիրվում են գործադիր մարմնի կողմից՝ ըստ անհաժեշտության:

Համաձայն «Այդի Բանկ» ՓԲԸ-ի խորհրդի գործունեության կարգի՝ Խորհրդի անդամների համար ընկերությունը պարբերաբար կազմակերպում է ուսուցում ՓԼ/ԱՖ կանխարգելման թեմայով՝ համաձայն Բանկի «Աշխատակիցների վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման» ընթացակարգի:

Միևնույն ժամանակ՝ ընկերությունն ապահովում է, որ Համապատասխանության ծառայության կողմից Խորհրդի անդամներին տրամադրվեն տարվա ընթացքում ոլորտային ու օրենսդրական ու նորմատիվային կարգավորումների փոփոխությունների (հատկապես՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, համապատասխանության ուղղությամբ) փոփոխությունների վերաբերյալ նյութեր՝ Խորհրդի անդամների մշտական տեղեկացվածությունն ապահովելու համար:

Վարձատրության քաղաքականությունը

Խորհրդի անդամները ունեն հաստատուն վարձատրություն առանց փոփոխական բաղադրիչի, որը փոխկապակցված չէ Բանկի ռազմավարական նպատակների հետ՝ հաշվի առնելով Խորհրդի գործունեության վերահսկողական բնույթը:
Խորհրդի անդամների վարձատրության ընդհանուր չափն արտացոլվում է Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվության մեջ:

Բանկի Խորհուրդը

Արթուր Ջավադյան
Խորհրդի նախագահ

Բանկային ոլորտում ավելի քան 35 տարվա փորձ ունենալով՝ Արթուր Ջավադյանը զբաղեցրել է ղեկավար հաստիքներ Հայաստանի մի շարք բանկերում և վճարահաշվարկային կազմակերպություններում, իսկ 1997-2020թթ. ՀՀ Կենտրոնական Բանկում զբաղեցրել է Խորհրդի անդամի, ՀՀ ԿԲ նախագահի խորհրդականի, նախագահի տեղակալի, ապա՝ նախագահի պաշտոնները:

Որպես ԿԲ նախագահ 2008-2020թթ. ընթացքում հանդիսացել է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՀԿ, «Բնակարան երիտասարդներին» ՈՒՀԿ, «ԱՔՌԱ» վարկային բյուրոյի, «ԱրՔա» համակարգի, «Հայինկասացիա» ՓԲԸ խորհրդի նախագահ, Հայաստանի ֆոնդային բորսայի խորհրդի անդամ:
2020 թվականից հատուկ հանձնարարություններով ՀՀ դեսպանն է: 2022 թվականից հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ, իսկ 2024 թվականից Խորհրդի նախագահն է:

Արթուր Ջավադյանը 1981-1986թթ. սովորել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման ֆակուլտետում՝ որպես ինժեներ մեխանիկ, իսկ 1987-1989թթ. սովորել է «Հայգյուղմեքենայացում» ԳԱՄ ասպիրանտուրայում:

Վերապատրաստվել է Միջազգային ֆինանսների ճապոնական կենտրոնում (2002), Տորոնտոյի վերին ղեկավարության միջազգային կենտրոնում (2001), Շվեյցարիայի Կենտրոնական բանկի ուսումնական կենտրոնում (1998), Նյու-Յորքի Ամերիկյան բանկային գործի ինստիտուտում (1994), մասնակցել է Տնտեսական և բանկային ոլորտին վերաբերող միջազգային մի շարք սեմինարների (2000–2020):

Իր գործունեության ընթացքում Արթուր Ջավադյանը ստացել է մի շարք պարգևատրումներ, մասնավորապես՝
Անանիա Շիրակացու մեդալ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար», 2-րդ աստիճանի մեդալ «Ռազմական համագործակցության համար» մեդալ Ղրղզստանի Ազգային բանկի կողմից, մեդալ «Համագործակցության համար», Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի կողմից պատվոգիր՝ արդյունավետ համագործակցության համար, պատվավոր պատվոգիր՝ ԵՎՐԱԶԵՍԻ ինտեգրացիոն կոմիտեին առընթեր Արժեթղթերի շուկայի կարգավորման գծով լիազորված մարմինների ղեկավարների խորհրդի խնդիրների իրականացմանը ակտիվ մասնակցության, բարձր պրոֆեսիոնալիզմի և անձնական ներդրման համար:

Կարեն Մարգարյան
Խորհրդի անկախ անդամ-Խորհրդին կից կոմիտեի նախագահ

Կարեն Մարգարյանը տնտեսագիտության դոկտոր է, տեխնիկական գիտությունների թեկնածու՝ ավելի քան 37 տարվա փորձով ղեկավար պաշտոններում: Ունի գիտական կոչումներ և հեղինակ է տնտեսագիտության ու կառավարման վերաբերյալ ավելի քան հիսուն գիտական աշխատությունների: Կարեն Մարգարյանը նաև արձակագիր է՝ Մարկ Արեն գրական անունով, և նրա գրչին են պատկանում ավելի քան բսան վեպեր, որոնցից մի քանիսը էկրանավորվել են:

Ունի ավելի քան 40 տարվա փորձ ղեկավար պաշտոններում:

Ներկայումս Երևանի Հայ-ռուսական համալսարանի մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի տնօրենն է: 2022 թվականից GFN.AM-ի հիմնադիրն ու գործադիր տնօրենն է:
2024 թվականից «ԱյԴի Լիզինգ» ՈՒՀԿ ՍՊԸ խորհրդի նախագահն է և «Հայփոստ» ՓԲԸ Խորհրդի անդամ:

1971-1976թթ. Կարեն Մարգարյանը սովորել է Երևանի պոլիտեխնիկական համալսարանում: Տեխնիկական գիտությունների թեկնածու է: 2005-2006թթ. սովորել է Մոսկվայի պետական կառավարման համալսարանում:

Ներկայումս տնտեսագիտության դոկտոր է:

Անդրեաս Բլազե
Խորհրդի անկախ անդամ

Անդրեաս Բլազեն ունի 15 տարվա բազմազան փորձ մասնավոր կապիտալի, ներդրումային բանկային գործունեության, տեխնոլոգիաների, մանրածախ առևտրի, ավտոմոբիլային և կառավարման խորհրդատվության ոլորտներում, մասնավորապես՝ ներդրումների, պորտֆելի կառավարման, թվային փոխակերպման և գործառնական կառավարման մեջ:
2024թ. հունվարից Բլազեն հանդիսանում է AURELIUS Wachstumskapital-ի (Գերմանիա) գործառնական գործընկեր՝ շարունակելով օգտագործել իր լայնածավալ առաջնորդական և ռազմավարական հմտությունները: Զբաղեցրել է առանցքային պաշտոններ CECONOMY AG-ում և եղել է Ֆեդերալ-Մոգուլ (ԱՄՆ) Միաձուլումների և ձեռքբերումների ու ռազմավարության տնօրեն:

2002-2027 թվականներին Անդրեաս Բլազեն սովորել է Օստո Բայսհայմի անվան կառավարման դպրոցում (WHU): Բիզնեսի կառավարման մագիստրոսի դիպլոմ է ստացել WHU–Օստո Բեյշեյմի կառավարման դպրոցից:

Բանկի Խորհուրդը

Ելենա Խաչվանքյան
Խորհրդի անկախ անդամ-Խորհրդին կից կոմիտեի անդամ

Ելենա Խաչվանքյանը ֆինանսների և ռազմավարական կառավարման փորձագետ է՝ մեծ փորձառությամբ պետական ֆինանսների, պետական կառավարման և կորպորատիվ կառավարման ոլորտներում: Նա խորհրդատու է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպություններում և կարևոր ներդրում է ունեցել Հայաստանում իրականացվող բազմաթիվ բարեփոխումների մշակման և իրականացման գործում:

Նրա մասնագիտական ուղին ներառում է նաև երկարամյա աշխատանք մասնավոր հատվածում՝ խոշոր ընկերությունների ֆինանսական կառավարման և բիզնես խորհրդատվության ոլորտներում:

2000–2005թթ. Ելենան ուսանել է Հայ-ռուսական պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում, իսկ 2005–2007թթ.՝ նույն համալսարանի ասպիրանտուրայում:

Նա ունի մի շարք միջազգային որակավորումներ.

- Եվրոպական տնօրենների ասոցիացիաների կոնֆեդերացիայի (ecoDa) ծրագրի Եվրոպական խորհրդի դիպլոմ,
- Ռազմավարական կառավարում և առաջնորդություն դիպլոմ՝ Մեծ Բրիտանիայի Կառավարիչների լիցենզավորված ինստիտուտից (CMI),
- Երդվյալ Հավատարմագրված Հաշվապահների Ասոցիացիա (ACCA),
- Հանրային բաղաքականության վերլուծության սերտիֆիկատ՝ Լոնդոնի Տնտեսագիտության դպրոցից (LSE),

Ներկայումս, որպես Տնօրենների հայկական ինստիտուտի նախագահ, նա նպաստում է կորպորատիվ կառավարման բարձր չափանիշների և թափանցիկության մշակույթի ամրապնդմանը՝ թե՛ հանրային, թե՛ մասնավոր հատվածում:

Ֆերնանդո Կաստինյեիրաս
Խորհրդի անկախ անդամ

Ֆերնանդո Կաստինյեիրասը ֆինանսական և կառավարման փորձառու խորհրդատու է՝ ավելի քան երեք տասնամյակ միջազգային փորձով: Նրա մասնագիտական ուղին ընդգրկում է ռազմավարական ներդրումների, կապիտալի կառավարման և կորպորատիվ կառավարման ոլորտներ: Նա նաև IC-A՝ Իսպանիայի տնօրենների խորհրդի ասոցիացիայի անդամ է:

1988–1990թթ. Ֆերնանդոն սովորել է Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանում՝ ստանալով տնտեսագիտության բակալավրի կոչում: 2002թ. Մադրիդի պոլիտեխնիկական համալսարանի Հեռահաղորդակցության ինժեներների բարձրագույն դպրոցի Տեղեկատվական համակարգերի կառավարման մագիստրատուրայում սովորելով՝ ստացել է մագիստրոսի կոչում: 1999 – 2003 թթ. սովորել է Warwick Business School-ում: 2018թ. մասնակցել է Global CEO ծրագրին, որն իրականացվել է IESE (Իսպանիա), Wharton Business School-ի (ԱՄՆ) և CEIBS-ի (Չինաստան) կողմից:

1990թ. միացել է Arthur Andersen-ին Մադրիդում՝ ունենալով երկու տարվա փորձ որպես դրամական շուկայի գործակալ:

1996-2002թթ. ձեռնարկել է չորս տարվա միջազգային փորձի ծրագիր, ներառյալ իր աշխատանքը Լոնդոնի Գլոբալ ներդրումային բանկային խմբում:

2002թ. նա համահիմնադրել է Management Solutions (MS) միջազգային խորհրդատվական ընկերությունը: 2016 թվականից հանդիսանում է Athos Capital, SGEIC, S.A.-ի հիմնադիր, նախագահ ու գործադիր տնօրեն: Ներկայումս զբաղեցնում է տնօրենի պաշտոն Athos Capital-ի ցանցի ներքո գտնվող կազմակերպություններում: IC-A (The Instituto de Consejeros-Administradores) բիզնեսների և կազմակերպությունների տնօրենների խորհուրդների իսպանական ասոցիացիայի անդամ է:

Բանկի Խորհուրդը

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Խորհուրդը իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում՝ համաձայն օրենքի և Բանկի կանոնադրության:

Խորհրդի լիազորություններից են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը՝ ներառյալ ռազմավարական զարգացման ծրագրի հաստատումը,
2. Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը,
3. Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը և հաստատումը,
4. Շահաբաժինների վճարման վերաբերյալ Բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը,
5. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացումը,
6. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ որոշումների ընդունումը,
7. Բանկի մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և գրասենյակներ բացելու վերաբերյալ որոշումների ընդունումը,
8. Շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման վերաբերյալ որոշումների կայացումը՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում,
9. Օրենքով կամ Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ հարցերի վերաբերյալ որոշումների ընդունումը:

Բանկի Խորհուրդ

⬇

Խորհրդին կից ռիսկերի, ներքին աուդիտի և ներքին վերահսկողության կոմիտե

⬇

Հիմնական նպատակը

Կոմիտեի հիմնական նպատակներն են աջակցել Խորհրդին Բանկի և նրա բաժնետերերի առջև ստանձնած պարտականությունների կատարման գործում, որոնք վերաբերում են ռիսկերի կառավարմանը, ներքին աուդիտին և ներքին վերահսկողությանը, իրավական և կարգավորող պահանջներին համապատասխանությանը, ֆինանսական տեղեկատվության թափանցիկությանն ու ամբողջականությանը, ինչպես նաև ապահովել Խորհրդի կառավարման և վերահսկման ֆունկցիաների իրականացումը այս համակարգերի գործունեության շրջանակներում:

Կոմիտեի հիմնական խնդիրներն են՝

1) աջակցել Բանկի Խորհրդին Բանկի գործադիր մարմինների գործունեության վերահսկողության հարցում և ապահովել Բանկի Խորհրդի անդամների արդյունավետ համագործակցությունը Բանկի ղեկավարության հետ՝ Կոմիտեի իրավասության շրջանակներում գտնվող հարցերի շուրջ,

2) գնահատել ռիսկերի կառավարման համակարգերի, ներքին աուդիտի և ներքին վերահսկողության գործունեության արդյունավետությունն ու համարժեքությունը:

Բանկի խորհրդին կից Ռիսկերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության կոմիտեի հայտարարությունը

«Այդի Բանկ» ՓԲԸ Խորհրդին կից Ռիսկերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) անունից հաստատում եմ, որ 2024 թվականին Կոմիտեն լիարժեքորեն իրականացրել է իր պարտականությունները՝ Կոմիտեի գործունեությունը կարգավորող կարգով սահմանված իրավասությունների շրջանակներում:

Տարվա ընթացքում Կոմիտեն՝

- Իրականացրել է վերահսկողություն Բանկի ներքին հսկողական համակարգի նկատմամբ, մասնավորապես՝ ռիսկերի կառավարման, համապատասխանության, ներքին վերահսկողության և ներքին աուդիտի համակարգերի նկատմամբ, ինչպես նաև այլ հսկողական հարցերի;
- Քննարկել է տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախագծերը, ղեկավարությանը հասցեագրված նամակը, աուդիտի ավարտի հաղորդագրությունները կառավարման մարմիններին, արտաքին աուդիտի նյութերը և ղեկավարության պատասխանները;
- Դիտարկել է ռիսկերի վրա հիմնված ներքին աուդիտի, ֆինանսական մոնիթորինգի և համապատասխանության ծառայությունների տարեկան աշխատանքային ծրագրերը;
- Գնահատել է Ներքին աուդիտի ծառայության և Համապատասխանության ծառայության արդյունավետությունը, անկախությունը և գործունեությունը;
- Քննարկել է էական ռիսկային հարցեր, այդ թվում՝ համապատասխանության, իրավական, գործառնական, շուկայական, վարկային և համբավի ռիսկեր, ապահովելով դրանց համապատասխանությունը Բանկի ռիսկի ախորժակին և կարգավորող պահանջներին;
- Դիտարկել է SREP գնահատման արդյունքները և առնչվող գործողությունների պլանի կատարումը;
- Սահմանել է պահանջ Կոմիտեի ինքնագնահատման իրականացման համար;
- Վերանայել և կատարելագործել է իր իրավասությունները՝ համաձայն կորպորատիվ կառավարման լավագույն փորձի;
- Իրականացրել է վերահսկողություն Խորհրդի այն առաջարկությունների կատարման նկատմամբ, որոնք մտնում են Կոմիտեի իրավասությունների մեջ:

Կոմիտեն հաստատում է, որ իր իրավասության ներքո գտնվող բոլոր հարցերը պատշաճ կերպով քննարկվել են ղեկավարության, Ներքին աուդիտի ծառայության, Համապատասխանության ծառայության, Ֆինանսական մոնիթորինգի ծառայության, Ռիսկերի կառավարման և արտաքին աուդիտորների հետ և ներկայացվել են Խորհրդին: Կոմիտեն վստահ է, որ իր գործունեությունը կառուցողականորեն նպաստել է Բանկում կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և ներքին վերահսկողության համակարգի ամրապնդմանը:

Կոմիտեի անունից,
Կարեն Մարգարյան
«Այդի Բանկ» ՓԲԸ Խորհրդին կից
Ռիսկերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության կոմիտեի նախագահ

Բանկի վարչակազմակերպական կառուցվածք

Հաստատվել է Բանկի Խորհրդի կողմից 23.08.2024թ.
նիստի 6 արձանագրության 5-րդ որոշմամբ



Բանկի Վարչությունը

Միեր Աբրահամյան
Վարչության նախագահ

Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման տնօրեն,
Վարչության անդամ

Լիլիթ Սարգսյան
Ֆինանսական տնօրեն,
Վարչության անդամ

Արման Ասատրյան
Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն,
Վարչության անդամ

Լիլիթ Գրիգորյան
Գործառնական տնօրեն,
Վարչության անդամ

Սերգեյ Առաքելյան
Թվային Բանկինգի տնօրեն,
Վարչության անդամ



Անուշիկ Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ,
Վարչության անդամ

Արթուր Համբարձումյան
Ռիսկերի կառավարման գծով տնօրեն,
Վարչության անդամ

Անձնակազմը

Բանկի ակտիվ աշխատակիցների թվաքանակը 2024 թվականի վերջի դրությամբ **883**

Աշխատակիցների կազմը ըստ տարիքի %



Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ տարիքի %



Աշխատակիցների կազմն ըստ սեռի, %



Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ սեռի, %



Թիմային և կորպորատիվ մշակույթ

Մենք Թիմային ենք – թիմայնությունը Բանկի հիմնական արժեքներից է և հանդիսանում է կորպորատիվ մշակույթի ձևավորման հիմնասյունը ու պարտադիր պայմանը հաջողության հասնելու համար:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս կազմակերպվեցին մի շարք թիմային միջոցառումներ (երեխաների պաշտպանության միջազգային օր, ամառային և ամանորյա կորպորատիվ միջոցառումներ, բանկային աշխատողի օր և այլն) և շարունակական հանդիպումներ՝ միտված թիմային ոգին բարձր պահելուն, ինչպես նաև աշխատանքից դուրս կապեր ձևավորելուն :

Շարունակեցինք հնարավորություն տալ աշխատակիցներին առավել ճկուն աշխատանքային ռեժիմով աշխատել, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աշխատել հեռավար և առկա ռեժիմով՝ սահուն աշխատանքային ընթացք պահելու համար:

2024թ. ընթացքում սոցիալ պատասխանատվության ծրագրերին անձնակազմը մասն դարձավ երեխաների, զինվորների, արցախից տեղահանվածների և սահմանամերձ գյուղերի բնակիչների աջակցմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությանը: Այս միջոցառումներին մասնակցությունը նույնպես հնարավորություն ընձեռեց աշխատակիցներին աշխատանքից դուրս շփումներ զարգացնելու:

Վարձատրություն և մոտիվացիա

Բանկի ուշադրության կենտրոնում է ֆինանսաբանկային ոլորտի վարձատրության և արտոնությունների շուկայի խորքային վերլուծությունը՝ նպատակ ունենալով հետևել տենդենցներին և ապահովել ժամանակին ու համարժեք արձագանք:

Բանկը խրախուսում է աշխատակիցներին՝ կիրառելով թե՛ ֆինանսական, թե՛ ոչ ֆինանսական մոտիվացիոն գործիքներ: Արտոնությունների փաթեթը պարբերաբար վերանայվում և հարստացվում է՝ այն առավել համահունչ դարձնելով աշխատակիցների կարիքներին և ժամանակակից պահանջներին:

Լավագույն կատարողական ցուցաբերած աշխատակիցների համար կազմակերպվել են հանդիպումներ Վարչության նախագահի հետ, որոնց ընթացքում նրանք բացի արժեքավոր նվերներից, ստացել են նաև հնարավորություն քննարկելու իրենց աշխատանքային հաջողություններն ու հետագա մասնագիտական աճը:

Տարեկան գնահատման համակարգը շարունակաբար կատարելագործվում է՝ դառնալով Բանկի նյութական խրախուսման մշակույթի կարևոր բաղադրիչ և արդյունավետ գործիք՝ բարձր կատարողականի ճանաչման ու խրախուսման համար:

Աշխատակիցների ներգրավման քաղաքականություն



2024 թվականի ընթացքում Բանկի թիմը համալրվել է 272 նոր աշխատակիցներով:

Շարունակելով կարևորել անձնակազմի ներքին զարգացումն ու առաջընթացը՝ թափուր հաստիքների շուրջ 20%-ը համալրվել է ներքին թեկնածուների շնորհիվ՝ համալրելով ինչպես մասնագետների, այնպես էլ ղեկավար հաստիքներ:

Բանկի անձնակազմի ներգրավման քաղաքականության կարևոր մաս է կազմում ուսանողների հետ աշխատանքը՝ մեկտեղելով սկսնակ մասնագետների ձևավորումն ու ոլորտի առաջատար մասնագետներին մեր շարքեր ներգրավելու գործընթացը:

Ղեկավարների եռամսյակային հանդիպումներ

2024 թվականին տեղի ունեցան **Ղեկավարների եռամսյակային հանդիպումներ**: Այս հանդիպումների նպատակն է ստեղծել տիրույթ, որտեղ հավաքված կլինեն բոլոր օղակի ղեկավարները և տեղեկացված կլինեն միմյանց կատարած աշխատանքի արդյունքներից, հաջողություններից և առկա մարտահրավերներից, ինչպես նաև Բանկի համար ռազմավարական նշանակություն ունեցող քննարկումների մի մասը կդառնան:

Կորպորատիվ մշակույթ և ներքին հաղորդակցում

Հավատարիմ մնալով մեր արժեքներին ու սկզբունքներին՝ Բանկը շարունակում է զարգացնել կորպորատիվ մշակույթն ու ներքին հաղորդակցման ուղիները:

Կորպորատիվ հաղորդակցման հարթակի շնորհիվ աշխատակիցները հնարավորություն ունեն ժամանակին ու պատշաճ ծանոթանալ առկա նորությունների ու տեղի ունեցող փոփոխություններին, մասնակցել հարցումների ու հանդես գալ առաջարկություններով, մասնակցել տարբեր հետաքրքրիր օնլայն մրցույթների և ինտերակտիվ հարցումների:

Համագործակցություն ուսանողների հետ. IDream ծրագիր

Որակյալ կրթությունը մեր առաջնահերթություններից է: Բանկն ակտիվ համագործակցում է մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և որոշակիորեն մասնակցում է ոչ ֆորմալ կրթությանը՝ ուսանողներին ընձեռելով բանկային ոլորտին ծանոթանալու հնարավորություն:

2024թ. Բանկը կազմակերպեց ուսանողների համար IDream ուսումնական ծրագիրը 3 անգամ՝ հնարավորություն տալով ևս 78 նորավարտ ուսանողի սկսելու իրենց կարիերան Բանկի հետ: Այս ծրագրի շնորհիվ բոլոր ուսանողները ստանում են ֆինանսաբանկային ոլորտի տեսական և գործնական գիտելիքներ, ձևավորում հմտություններ, որոնք անհրաժեշտ են Բանկային ոլորտի սկսնակ աշխատակցին:

Աշխատակիցների ուսուցում և զարգացում

Բանկի Ուսուցման և զանգացման կենտրոնը տարվա ընթացքում կազմակերպել և վերահսկել է 200-ից ավել օնլայն և օֆլայն վերապատրաստման դասընթացներ, կիսվել զանազան նյութերով, հետաքրքիր զարգացնող գրականությամբ և պրեզենտացիաներով: Աշխատակիցները հնարավորություն ունեն վերապատրաստվել ոչ միայն արտաքին կամ Բանկում կազմակերպվող դասընթացների մասնակցելով, այլ նաև առցանց հարթակի միջոցով՝ իրենց հարմար ժամանակացույցով ու արագությամբ:

2024 թվականի ընթացքում աշխատակիցների 85%-ը վերապատրաստվել է, որոնց 74%-ը մասնակցել է ներքին վերապատրաստման դասընթացների, իսկ 26%-ը վերապատրաստվել է՝ մասնակցելով արտաքին դասընթացների:

Բանկը մշտապես խրախուսում ու աջակցում է աշխատակիցներին ստանալու միջազգային որակավորումներ ու հավաստագրեր, ինչպես նաև նպատակ ունի վերին և միջին օղակի ղեկավարների համար միջազգային որակավորումների պահանջ սահմանել՝ ցուցաբերելով ֆինանսական աջակցություն տվյալ գործընթացում:

5

Ֆինանսական հաշվետվություններ

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 34

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն 35

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն 35

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 36

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 36

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Այ Դի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են «Այ Դի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով, կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2025թ. մարտի 4-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք: Այդ եզրակացությունը ներառում է նաև տեղեկատվություն աուդիտի առանցքային հարցերի վերաբերյալ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* (վերանայված) աուդիտի միջազգային ստանդարտ 810-ին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝	Ռուսլան Խորոշվիլի
Գլխավոր տնօրեն՝	Էրիկ Հայրապետյան
Պատասխանատու աուդիտոր՝	Ելենա Ադամյան

04 մարտի, 2025թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2024թ. **հազ. դրամ**	*2023թ.* **հազ. դրամ**
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	31,532,439	25,931,049
Տոկոսային ծախս	(9,381,978)	(7,098,421)
Զուտ տոկոսային եկամուտ	**22,150,461**	**18,832,628**
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	13,090,630	10,361,438
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	(9,687,118)	(6,863,060)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ	**3,403,512**	**3,498,378**
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	9,296,540	7,460,147
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով	528,261	1,069,273
Զուտ իրացված օգուտ/(վնաս) ներդրումային արժեթղթերի գծով	34,021	(93,720)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	1,091,379	575,245
Այլ գործառնական եկամուտ	650,828	233,476
Այլ գործառնական ծախս	(462,915)	–
Գործառնական եկամուտ	**36,692,087**	**31,575,427**
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	(1,630,327)	(382,000)
Արժեզրկումից այլ կորուստներ	(197,557)	–
Անձնակազմի գծով ծախսեր	(8,978,307)	(7,269,745)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր*	(6,683,173)	(4,741,784)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**19,202,723**	**19,181,898**
Շահութահարկի գծով ծախս	(3,403,538)	(3,424,768)
Շահույթ տարվա համար	**15,799,185**	**15,757,130**
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի		
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.		
- իրական արժեքի զուտ փոփոխություն	278,572	302,230
- շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	(837)	87,786
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	277,735	390,016
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար՝ առանց շահութահարկի	**277,735**	**390,016**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**16,076,920**	**16,147,146**

* 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վարչական ծախսերում ներառված է Բանկի արտաքին աուդիտի համար սահմանված վարձատրությունը՝ 43,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ:

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2024թ. **հազ. դրամ**	*2023թ.* **հազ. դրամ**
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	39,267,755	36,606,515
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	14,606,422	8,606,787
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	61,925,847	63,515,077
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	870,332	449,838
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
- Բանկի կողմից պահվող	15,339,459	10,812,707
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	385,583	–
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
- Բանկի կողմից պահվող	46,323,507	54,361,958
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	14,692,076	6,646,146
Հաճախորդներին տրված վարկեր	200,859,003	158,884,500
Առգրավված ակտիվներ	2,020,530	2,709,765
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	7,586,623	7,575,245
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10,929,352	9,687,175
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	3,456,651	3,188,475
Այլ ակտիվներ	4,196,518	3,630,008
Ընդամենը ակտիվներ	**422,459,658**	**366,674,196**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	17,095,588	8,010,540
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	71,711,412	57,310,415
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	11,255
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	223,020,022	209,920,125
Ընթացիկ շահութահարկի պարտավորություններ	2,073,310	2,258,501
Թողարկված պարտքային արժեթղթեր	17,120,222	15,506,851
Հետաձգված հարկային պարտավորություն	337,070	442,859
Վարձակալության գծով պարտավորություններ	3,799,406	3,415,391
Այլ պարտավորություններ	12,840,916	6,313,467
Ընդամենը պարտավորություններ	**347,997,946**	**303,189,404**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ	5,014,099	5,014,099
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	397,227	119,492
Չբաշխված շահույթ	35,078,536	24,379,351
Ընդամենը սեփական կապիտալ	**74,461,712**	**63,484,792**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**422,459,658**	**366,674,196**

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2024թ. հազ. դրամ	*2023թ.* հազ. դրամ
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	31,216,613	26,275,698
Վճարված տոկոսներ	(9,757,342)	(6,746,112)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ	13,090,630	10,361,438
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ	(9,686,593)	(6,863,060)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով	90,012	272,222
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	9,692,900	8,288,866
Այլ ստացված եկամուտ	255,376	288,183
Անձնակազմի գծով ծախսեր և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(11,102,753)	(9,147,534)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	6,468	678,417
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(6,011,065)	7,293,125
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(215,641)	(20,856,671)
Հաճախորդներին տրված վարկեր	(44,807,782)	(38,058,088)
Առգրավված ակտիվներ	481,624	572,884
Այլ ակտիվներ	–	(262,859)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	15,300,165	9,376,019
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	9,098,517	8,007,628
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	18,468,971	18,339,456
Այլ պարտավորություններ	58,297	104,285
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև հաճութահարկի վճարումը	**16,178,397**	**7,923,897**
Վճարված հաճութահարկ	(3,755,484)	(4,133,155)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	**12,422,913**	**3,790,742**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(26,735,877)	(11,910,651)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(89,084,470)	(56,426,143)
Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից	22,049,808	9,463,826
Մուտքեր ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի մարումից	87,991,203	65,443,788
Ասոցիացված կազմակերպությունների ձեռքբերում	–	(7,000,000)
Ստացված շահաբաժիններ	1,080,000	
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,973,827)	(3,493,292)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	44,022	8,124
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	**(7,629,141)**	**(3,914,348)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	8,499,839	6,208,154
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(6,673,525)	(3,982,629)
Մուտքեր ներգրավված միջոցներից	3,678,363	11,517,476
Ներգրավված միջոցների մարում	(3,706,737)	(3,290,975)
Վճարված շահաբաժիններ	(1,600,000)	(11,237,500)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(577,226)	(276,834)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) դրամական հոսքեր	**(379,286)**	**(1,062,308)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**4,414,486**	**(1,185,914)**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,754,003)	1,520,173
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	757	(1,174)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	36,606,515	36,273,430
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	**39,267,755**	**36,606,515**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ՀՀ դրամ'000	*Բաժնետիրական կապիտալ*	*Էմիսիոն եկամուտ*	*Շենքերի վերագնահատումից*	*Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը սեփական կապիտալ*
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	33,971,850	5,014,099	96,917	(270,524)	19,859,721	**58,672,063**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ տարվա համար	–	–	–	–	15,757,130	**15,757,130**
Այլ համապարփակ վնաս						
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	–	–	–	302,230	–	**302,230**
Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	–	–	–	87,786	–	**87,786**
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	–	–	–	390,016	–	**390,016**
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	–	–	–	**390,016**	–	**390,016**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**–**	**–**	**–**	**390,016**	**15,757,130**	**16,147,146**
Վճարված շահաբաժիններ	–	–	–	–	(11,237,500)	**(11,237,500)**
Շենքերի վերագնահատումից ածի պահուստի հակադարձում	–	–	(96,917)	–	–	**(96,917)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**33,971,850**	**5,014,099**	**–**	**119,492**	**24,379,351**	**63,484,792**
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	33,971,850	5,014,099	–	119,492	24,379,351	**63,484,792**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ տարվա համար	–	–	–	–	15,799,185	**15,799,185**
Այլ համապարփակ վնաս						
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	–	–	–	278,572	–	**278,572**
Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	–	–	–	(837)	–	**(837)**
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	–	–	–	277,735	–	**277,735**
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	–	–	–	**277,735**	–	**277,735**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**–**	**–**	**–**	**277,735**	**15,799,185**	**16,076,920**
Վճարված շահաբաժիններ	–	–	–	–	(5,100,000)	**(5,100,000)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**33,971,850**	**5,014,099**	**–**	**397,227**	**35,078,536**	**74,461,712**

Ծանոթագրություն 1

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են Բանկի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը և այլ պարզաբանող տեղեկությունները, որոնց բացահայտումը պարտադիր է համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի հետ կարելի է ծանոթանալ «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրոնային կայքում:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. Ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են ԱյԴի Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

2. 2024թ. աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Միեր Աբրահամյան	Վարչության նախագահ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արման Ասատրյան	Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Կարեն Նալբանդյան	Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արթուր Համբարձումյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Սերգեյ Առաքելյան	Թվային բանկինգի տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Լիլիթ Սարգսյան	Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Լիլիթ Գրիգորյան	Գործառնական տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)